կարելի է հաղորդել քարտեզի միջոցով։ Այն կոչված էր նպաստելու հայ երիտասարդության մեջ հայրենասիրություն ներարկելու գործին, մեծ օգնություն պետք է ցույց տար երկրի ազատագրությանը նախանձախնդիր հայ իշխանավոր անձանց ու զորավարներին՝ իրենց ամենօրյա պայքարում, օտարազգիներին պետք է ցույց տար, թե ինչպիսին է Հայաստան երկիրը։

Վենետիկյան Մխիթարյանների տպարանի նորագույն մի գրացուցակից երևում է, որ «Աշխարհացույց Հայաստանեայց»-ը հրատարակվել է նրանց մոտ[3]։ Մխիթարյանները դեռ հնուց կապված էին հնդկահայ գաղութի հետ, երբեմն վարդապետներ էին ուղարկում Հնդկաստան նվիրատվություններ հավաքելու[4], տարածում էին այնտեղ իրենց հրատարակությունները։ Շ. Շահամիրյանը, ըստ երևույթին, ծանոթ է եղել Ս. Ղազարում լույս ընծայված քարտեզների հետ, ուստի և իր «Աշխարհացույց»-ի հրատարակությունը վստահել է Մխիթարյաններին։ Ասենք, այն ժամանակ (XVIII դ.) և դրանից բավական հետո Վենետիկը միակ վայրն էր, ուր հայերեն քարտեզներ էին տպագրվում։ Հարկ է նշել, որ Մխիթարյանները պատվով են կատարել Շ. Շահամիրյանի պատվերը. նրանց փորագրած ու հրատարակած «Աշխարհացույց Հայաստանեայց»-ը տեխնիկայի այն ժամանակվա պայմաններում, անտարակույս, քարտեզագրական մի լուրջ նվաճում է եղել։

«Աշխարհացույց Հայաստանեայց»-ը տպագրված է թղթի վրա, գունավոր է, չափսն է՝ 82,5×82,5 սմ, ունի աշխարհագրական ստանձնացանց, որի զուգահեռականներն ու միջօրեականները անց են կացված շատ նուրբ գծերով։ Աշխարհագրական անունները, ի բաց առյալ մի քանի երկրների, ծովերի ու գետերի անունների, գրված են զուգահեռականների ուղղությամբ։ Մեծ ծովերի՝ «Պոնտոսի (Սեաւ)», «Միջերկրեայ», «Կասպից (Վրկանի)» և «Պարսկային ծոցի» վրա նկարված են առագաստանավեր։ Լեռները տրված են հեռանկարային գծագրությամբ։ Բավականին լայն գծերով ու տարբեր գույներով անց են կացված վարչական սահմանները. Մեծ Հայքը, Վրաստանը, Գիլանն ու Հյուսիսային Կովկասը բաժանված են նաև առանձին գավառների։ Ի տարբերություն Մխիթարյանների տպարանում 1751 թ. լույս ընծայված «Աշխարհացույց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց»-ի, բնակավայրերը այս քարտեզում պատկերված են ոչ թե շենքերի հեռանկարային գծագրությամբ, այլ կլոր և վարդաձև տարբեր չափի շրջանակներով։ Առանձնապես խոշոր ու որոշակի է գծված Երևանը, որը, ինչպես հայտնի է, մագրասցիների երազած անկախ Հայաստանի մայրաքաղաքն էր լինելու։ Էջմիածնի վայրում նկարված է մի մեծ եկեղեցի, իսկ Մշո Ս. Կարապետի տեղում՝ սար է, վրան վանք։ Արարատի վրա պատկերված է բիբլիական Նոյի տապանը, իսկ Անիի վայրում՝ պարբսպապատ մի քաղաք։ Ափերի գծագրությունները, որ հիմնականում համապատասխանում են աշխարհագրության այն ժամանակվա տվյալներին, ունեն, սակայն, բազմաթիվ պարզեցումներ ու բացահայտ սխալներ։ Տարօրինակ գծագրություն ունեն «Գեղամայ», «Աղթամարայ» և «Կապուտան» ծովակները, վերջին երկուսը համարյա դիպչում են միմյանց։ Բազմաթիվ են բնակավայրերի սխալ տեղադրումները. Վանն, օրինակ, գտնվում է ոչ թե լճի արևելյան, այլ հարավ-արևմտյան ափին, խոյը հայտնվել է Վանա լճի հյուսիսային ափին և այլն։

---

3 Գրացուցակ Մխիթարեան տպարանին, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1960, էջ 108։

4 Լ ե ո, Հայկական տպագրութիւն, հատոր երկրորդ, Թիֆլիս, 1902, էջ 576։